ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի Հավելված 1

Ընդհանուր պահանջներ

Սարքավորումները պետք է լինեն նոր, չօգտագործված: Առաջարկվող սարքերը պետք է լինեն արտադրողի կամ ապրանքային նշանի պաշտոնական արտադրատեսակ, ունենան մոդելի հստակ անվանում և արտադրողի պաշտոնական կայքում հրապարակված տեխնիկական բնութագրեր: Տեսախցիկները և ցանցային տեսաձայնագրիչները պետք է լինեն նույն արտադրողի (ապրանքանիշի) արտադրանք և միմյանց հետ համատեղելի: Սարքավորումները պետք է լինեն միջազգային (Global/International) տարբերակի, առնվազն անգլերեն լեզվով ինտերֆեյսով: Արտադրությունից հանված (EOL) մոդելներ չեն ընդունվում:

Մատակարարվող ապրանքի և կատարված տեղադրման աշխատանքների երաշխիքային ժամկետը առնվազն 12 ամիս է՝ տեղադրված համակարգի հանձնման-ընդունման օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում Մատակարարը պարտավոր է իր միջոցներով ապահովել ապրանքի և տեղադրման աշխատանքների թերությունների (անսարքությունների) վերացումը կամ ապրանքի փոխարինումը:

Տեղադրման (մոնտաժման) պահանջներ

1. Մատակարարն իր ուժերով և միջոցներով իրականացնում է մատակարարված բոլոր սարքավորումների տեղադրումը, մալուխային գծերի անցկացումը, միացումը, կարգաբերումը և գործարկումը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հետևյալ քրեակատարողական հիմնարկների ադմինիստրատիվ (վարչական) մասնաշենքերում և դրանց հարակից տարածքում՝ «Գորիս», «Արթիկ», «Վանաձոր», «Սևան», «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Աբովյան»: Տեսախցիկների բաշխումն ըստ հիմնարկների և տեղադրման կոնկրետ կետերը տրամադրում է Պատվիրատուն:

2. Տեղադրման համար անհրաժեշտ բոլոր օժանդակ նյութերը (RJ-45 միակցիչներ, միացման տուփեր, ամրացման պարագաներ և այլն) ապահովում է Մատակարարը:

Մատակարարվող ապրանքների ցանկը և տեխնիկական բնութագրերը

Հ/Հ	Անվանում	Տեխնիկական տվյալներ	Քանակ	Չ/Մ
1.	**IP տեսախցիկ**	- Տեսակը՝ IP, Bullet, արտաքին տեղադրման: - Սենսոր՝ 1/2.9" կամ ավելի մեծ CMOS, լուծաչափ՝ առնվազն 2 MP (1920×1080)՝ առնվազն 25 կադր/վրկ: - Լուսազգայունություն՝ ոչ ավելի, քան 0.005 լյուքս (գունավոր ռեժիմ, F1.6): - Օբյեկտիվ՝ ֆիքսված 2.8 մմ, F1.6 կամ ավելի լուսաուժեղ, հորիզոնական	**31**	**հատ**

		դիտման անկյուն՝ առնվազն 95°: - Լուսավորություն՝ ինֆրակարմիր՝ առնվազն 30 մ, սպիտակ՝ առնվազն 20 մ, ավտոմատ (խելացի) փոխանջատմամբ, ICR ֆիլտր: - Սեղմում՝ H.265 և H.264 (H.265+ կամ համարժեք), առնվազն 2 տեսահոսք: - Պատկերի բարելավում՝ DWDR, 3D DNR, BLC և HLC կամ համարժեք: - Մարդու հայտնաբերում և դասակարգում, շարժման և ծածկման (tampering) հայտնաբերում: - Ներկառուցված խոսափող: - RJ-45 (10/100 Mbps), ONVIF (առնվազն Profile S), RTSP: - Սնուցում՝ PoE (IEEE 802.3af), սպառում՝ ոչ ավելի, քան 8 Վտ: - Աշխատանքային ջերմաստիճան՝ առնվազն –30°C-ից +60°C, պաշտպանվածություն՝ առնվազն IP67:		
2.	**Ցանցային տեսաձայնագրիչ (NVR)**	- IP ալիքներ՝ առնվազն 8, աջակցվող տեսախցիկների լուծաչափ՝ առնվազն 4 MP: - Մուտքային ցանցային թողունակություն՝ առնվազն 60 Mbps: - Վերծանում՝ առնվազն 4 × 1080p միաժամանակյա դիտում: - Սեղմում՝ H.265 և H.264 (H.265+ կամ համարժեք): - Տեսաելքեր՝ HDMI և VGA (միաժամանակյա), լուծաչափ՝ առնվազն 1920×1080: - Կոշտ սկավառակ՝ առնվազն 1 SATA, մեկ սկավառակի աջակցվող տարողություն՝ առնվազն 6 TB: - Ցանցային միացում՝ RJ-45, USB՝ առնվազն 2: - ONVIF և RTSP աջակցություն:	**7**	**հատ**
3.	**Կոշտ սկավառակ (HDD)**	Կոշտ սկավառակ (HDD)՝ նախատեսված տեսահսկման համակարգերի (NVR/DVR) համար, առնվազն 2 TB տարողությամբ, 3.5 դյույմ, շուրջօրյա անընդմեջ (24/7) աշխատանքային ռեժիմի աջակցությամբ, արտադրողի կողմից պաշտոնապես դասակարգված որպես Surveillance HDD: Սկավառակը պետք է լինի նոր (չի թույլատրվում վերանորոգված՝ refurbished	**7**	**հատ**

		կամ recertified):		
4.	**PoE կոմուտատոր**	- PoE միացումներ՝ առնվազն 8: - Uplink միացումներ՝ առնվազն 1 (10/100 Mbps կամ ավելի): - PoE միացումների արագություն՝ առնվազն 10/100 Mbps: - PoE ստանդարտներ՝ IEEE 802.3af և IEEE 802.3at: - Մեկ PoE միացման հզորություն՝ առնվազն 30 Վտ: - Ընդհանուր PoE բյուջե՝ առնվազն 60 Վտ: - Կոմուտացիոն թողունակություն՝ առնվազն 1.8 Gbps: - Երկարացված փոխանցման ռեժիմ (Extend)՝ մինչև 250 մ: - Կախված տեսախցիկի ավտոմատ վերագործարկման (PoE Watchdog) և միացումների մեկուսացման (Port Isolation) գործառույթներ կամ համարժեք: - Սնուցում՝ 100–240 V AC (սնուցման բլոկը կամ ադապտերը ներառված է): - Կորպուս՝ մետաղական, առանց օդափոխիչի (fanless): - PoE հզորության խելացի կառավարում՝ գերբեռնվածությունից պաշտպանությամբ: - MAC հասցեների աղյուսակ՝ առնվազն 2K: - Աշխատանքային ջերմաստիճան՝ առնվազն 0°C-ից +40°C:	**7**	**հատ**
5.	**Մալուխ** FTP Cat5e	Արտաքին տեղադրման համար նախատեսված FTP Cat5e մալուխ՝ ընդհանուր փայլաթիթեղյա էկրանով, PE կամ HDPE արտաքին պատյանով, ուլտրամանուշակագույն ճառագայթների և խոնավության նկատմամբ դիմացկուն, ամբողջական պղնձե (100% Solid Copper)՝ առնվազն 24 AWG կամ ավելի հաստ հաղորդիչներով, PoE IEEE 802.3af և IEEE 802.3at ստանդարտներին համատեղելի: Մալուխի պատյանին պետք է լինի արտադրողի մակնշումը և մետրաժի նշումը: **Պղնձապատ ալյումինե (CCA), պղնձապատ պողպատե (CCS) կամ այլ ոչ ամբողջական պղնձե հաղորդիչներով մալուխները չեն համապատասխանում սահմանված տեխնիկական պահանջներին:**	**1830**	**մետր**

Общие требования

Оборудование должно быть новым, неиспользованным. Предлагаемые устройства должны быть официальной продукцией производителя или торговой марки, иметь четкое название модели и технические характеристики, опубликованные на официальном сайте производителя. Фотоаппараты и сетевые видеорегистраторы должны быть продуктами одного производителя (бренда) и совместимы друг с другом. Оборудование должно быть международной (Global/International) версии, как минимум с англоязычным интерфейсом. Модели, снятые с производства (EOL), не принимаются.

Гарантийный срок на поставленное изделие и выполненные монтажные работы составляет не менее 12 месяцев с даты поставки-приемки установленной системы. В течение гарантийного срока Поставщик обязан обеспечить устранение дефектов (неисправностей) в изделии и монтажных работах или замену изделия за свой счет.

Требования к установке (сборке)

1. Поставщик своими силами и средствами устанавливает все поставленное оборудование, прокладывает кабельные линии, подключает, настраивает и эксплуатирует его в административных зданиях следующих пенитенциарных учреждений Пенитенциарной службы Министерства юстиции Республики Армения и прилегающих к ним территориях: «Горис», «Артик», «Ванадзор», «Севан», «Нубарашен», «Вардашен» и «Абовян». Распределение камер по учреждениям и конкретным точкам установки осуществляется Заказчиком.

2. Все необходимые для установки вспомогательные материалы (разъемы RJ-45, распределительные коробки, монтажные принадлежности и т. д.) предоставляются Поставщиком.

Перечень поставляемой продукции и технические характеристики

н/с	Название	Технические данные	Количество	е/и
1.	IP-камера	- Тип: IP, цилиндрический, наружная установка. - Сенсор: CMOS 1/2,9" или больше, разрешение: не менее 2 МП (1920×1080),	31	шт

		не менее 25 кадров в секунду. - Светочувствительность: не более 0,005 люкс (цветной режим, F1.6). - Объектив: фиксированный 2,8 мм, F1.6 или ярче, горизонтальный угол обзора: не менее 95°. - Освещение: инфракрасное: не менее 30 м, белое: не менее 20 м, с автоматическим (интеллектуальным) переключением, ICR-фильтр. - Сжатие: H.265 и H.264 (H.265+ или эквивалент), не менее 2 видеопотоков. - Улучшение изображения: DWDR, 3D DNR, BLC и HLC или эквивалент. - Обнаружение и классификация людей, обнаружение движения и попыток взлома. - Встроенный микрофон. - RJ-45 (10/100 Мбит/с), ONVIF (не менее Profile S), RTSP. - Питание: PoE (IEEE 802.3af), потребление: не более 8 Вт. - Рабочая температура:		
2.	**Сетевой видеорегистратор (NVR)**	- IP-каналы: не менее 8, поддерживаемое разрешение камеры: не менее 4 МП. - Входящая пропускная способность сети: не менее 60 Мбит/с. - Декодирование: не менее 4 × 1080p при одновременном просмотре. - Сжатие: H.265 и H.264 (H.265+ или эквивалент). - Видеовыходы: HDMI и VGA (одновременно), разрешение: не менее 1920×1080. - Жесткий диск: не менее 1 SATA, поддерживаемая емкость на диск: не менее 6 ТБ.	**7**	**шт**

		- Сетевое подключение: RJ-45, USB: не менее 2. - Поддержка ONVIF и RTSP.		
3.	**Жесткий диск (HDD)**	Жесткий диск (HDD), предназначенный для систем видеонаблюдения (NVR/DVR), емкостью не менее 2 ТБ, размером 3,5 дюйма, поддерживающий круглосуточную работу, официально классифицированный производителем как жесткий диск для систем видеонаблюдения. Диск должен быть новым (восстановленные или прошедшие повторную сертификацию диски не допускаются).	**7**	**шт**
4.	**PoE-коммутатор**	- Количество PoE-подключений: не менее 8. - Количество восходящих подключений: не менее 1 (10/100 Мбит/с или более). - Скорость PoE-подключения: не менее 10/100 Мбит/с. - Стандарты PoE: IEEE 802.3af и IEEE 802.3at. - Мощность одного PoE-подключения: не менее 30 Вт. - Общий бюджет PoE: не менее 60 Вт. - Пропускная способность коммутации: не менее 1,8 Гбит/с. - Расширенный режим передачи (Extend): до 250 м. - Функции PoE Watchdog и Port Isolation в зависимости от камеры или аналогичного устройства. - Питание: 100–240 В переменного тока (блок питания или адаптер входят в комплект). - Корпус: металлический, без вентилятора. - Интеллектуальное управление питанием PoE с защитой от перегрузки. - Таблица MAC-адресов: не менее 2K. - Рабочая температура: от 0°C до +40°C.	**7**	**шт**
5.	**Кабель FTP Cat5e**	Кабель FTP Cat5e для наружной установки с общим фольгированным экраном, внешней оболочкой из полиэтилена (PE) или полиэтилена высокой плотности (HDPE), устойчивый к УФ-излучению и влаге, полностью медный	**1830**	**метр**

		(100% цельная медь) с проводниками сечением не менее 24 AWG или толще, совместимый с PoE IEEE 802.3af и IEEE 802.3at. На оболочке кабеля должна быть маркировка производителя и маркировка счетчика. Медные проводники из алюминия (CCA), медные проводники из стали (CCS) или другие проводники из не цельной меди не соответствуют указанным техническим требованиям.		